20 օգոստոսի 2020 թվականի N 1388 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1545-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՎԵԼՎԻՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1545-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-6-րդ կետերով.

«	4.	8712003000	Հարմարեցված հեծանիվներ՝ հեծանվային շեյրինգի համար	Հարմարեցված հեծանիվ 26 ԴՅՈՒՅՄ, Shimano Outer 7 արագությամբ հեծանվային շեյրինգի համար: Բաղադրիչները ներառում են հարմարեցված ալյումինե խառնուրդի շրջանակ. Shimano front v-աձև արգելակ, Shimano back v-աձև արգելակ, Kenda պինդ չիպային օդաճնշական անվադողեր, շղթայի ապահովիչ, արտոնագրված հակաառևանգման համակարգ, պտուտակներ և օղակներ:	կգ /հատ	14 000/ 400	Չինաստան	13 580 000	
	5.	8526100009	Gps- կողպեքներ հեծանիվների համար	GPS, Bluetooth, BLE GPRS հեծանվի հակաառևանգման փական	կգ /հատ	900/ 500	Չինաստան	4 800 000	
	6.	8711601000	Էլեկտրական հեծանիվներ՝ սկուտեր շարժիչի հզորությամբ	Հարմարեցված ԷԼԵԿՏՐԱԿԱՆ հեծանիվ 10 ԴՅՈՒՅՄ, 250ՎԱՏՏ, 36V 10.4Ah շարժական լիցքավորվող մարտկոցով հեծանվային շեյրինգի համար	կգ /հատ	19 600/ 400	Չինաստան	23 040 000	».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «26 415 000» թիվը փոխարինել «67 835 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. օգոստոսի 25
Երևան